ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ
INTERNATIONAL CONFERENCE

ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐԴԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՂՁԱՆՔԻ ԵՎ ԿԵՆՑԱՂԻ ՄԻՋԵՎ

ARMENIAN MODERNITIES: THE STATE BETWEEN YEARNING AND EVERYDAY LIFE

ԾՐԱԳԻՐ
PROGRAM

NOV.16 ՆՈՅԵՄԲԵՐ 2024

modernities.am

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐԴԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՂՁԱՆՔԻ ԵՎ ԿԵՆՑԱՂԻ ՄԻՋԵՎ

Գիտաժողովը տարբեր դիտանկյուններից քննում է արդի պետականության ընկալումներն ու դրանց պատմական փոխակերպումները՝ կենտրոնանալով հայերի փորձառության վրա, բայց միաժամանակ բացահայտելով այդ փորձառությունը միջազգային համատեքստում: Ի՞նչ բաղձանքներ են ընկած պետություն կառուցելու՝ քաղաքական ըմբռնումների հիմքում, քաղաքական մտքի ի՞նչ ավանդույթի ծնունդ են դրանք: Ի՞նչ տեսք է ստանում պետությունն այս բաղձանքների իրականացման ճանապարհին: Ինչքանո՞վ են այս բաղձանքները տեղ գտնում ժողովրդի ամենօրյա ապրվող կյանքում: Պետության գաղափարի և այդ գաղափարի տակ տրոփող իրականության միջև լարումներն ու հակասություններն են կազմում գիտաժողովի հետազոտական առանցքը:

Գիտաժողովն ամփոփում է Հովհաննիսյան ինստիտուտի Հայկական արդիությունների ուսումնասիրման նախագծի շրջանակում 2023-2024 թվականներին իրականացված «Պետությունը բաղձանքի և կենցաղի միջև» հետազոտական ծրագրի արդյունքները:

ARMENIAN MODERNITIES: THE STATE BETWEEN YEARNING AND EVERYDAY LIFE

The conference discusses the conceptions of modern statehood and its historical transformations from multiple perspectives. It focuses on the experience of the Armenians while discovering this experience in an international context. What are the yearnings formative for the political conceptions underlying the construction of the state? Which political traditions inform their origins? What form does the state take on the path of the realization of these yearnings? And how far do these yearnings find place in the everyday life of the people? The core research agenda of the conference is informed by the tensions and contradictions between the idea of the state and the reality pulsating beneath this idea.

The conference brings together the outcomes produced within the research module *The State Between Yearning and Everyday Life* realized in 2023-2024 within the framework of Johannissyan Institute's Armenian Modernities Research Project.

ԾՐԱԳԻՐ/PROGRAM

NOV.16 ՆՈՅԵՄԲԵՐ 2024

10:30 – 10:40	Մասնակիցների գրանցում/Registration
10:40 – 11:00	Բացման խոսք/Opening Remarks **Վարդան Ազատյան** **Vardan Azatyan**
11:00 – 12:30	**ՆԻՍՏ/PANEL 1**
	ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ՍՏԱԼԻՆՅԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՆԴԻՆ **HISTORY AND POLITICS: BEYOND THE STALINIST HERITAGE**
11:00 – 11:10	**Վարող՝ Աշոտ Գրիգորյան** **Moderator - Ashot Grigoryan**
11:10 – 11:30	Ժիրայր Լիպարիտյան, պատմաբան, ԱՄՆ, Հայաստան **Աշոտ Հովհաննիսյանի պատմագիտության երկու ժամանակները** Gerard Jirair Libaridian, historian, USA, Armenia **The Two Timelines in Ashot Johannissyan's Historiography**
11:30 – 11:50	Լուսին Շաբոյան, արվեստաբան, Հայաստան **Անկախությունը բաղձանքի և իրականության միջև. ազգային անկախության ըմբռնումները Հայաստանի առաջին և երկրորդ հանրապետություններում** Lusin Shaboyan, art historian, Armenia **The Independence between Yearning and Reality: The Perceptions of National Independence in the First and Second Republics of Armenia**
11:50 – 12:10	Իրինա Շահնազարյան, արվեստաբան, Հայաստան **«Ճշմարտություն, որը հրատարակել չի կարելի». Աշոտ Հովհաննիսյանի անտիպ գրքի շուրջ** Irina Shahnazaryan, art historian, Armenia **"Truth That Cannot Be Published": On Ashot Johannissyan's Unpublished Book**

12:10 – 12:30	Ռոջեր Մարկվիք, պատմաբան, Ավստրալիա **Ձնհալներ և սառցակալումներ. խորհրդային պատմագրության պարադոքսը, 1956-1964** Roger Markwick, historian, Australia **Thaws and Freezes: The Paradox of Soviet Historiography, 1956-1964**
12:30 – 13:15	Քննարկում Discussion
13:15 – 14:15	Ընդմիջում Break

14:15 - 15:45 ՆԻՍՏ/PANEL 2

ՎԱՂԱՐԴԻ ԵՎՐՈՊԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ՀԵՏՔԵՐՈՎ. ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ԸՄԲՌՆԵԼՈՒ ՄԵՐ ԱՎԱՆԴՈՒՅԹԻ ՎԵՐԱՄՏԱԾՄԱՆ ՓՈՐՁ

TRACING EARLY MODERN EUROPEAN POLITICAL THOUGHT: AN ATTEMPT TO RETHINK OUR TRADITIONAL CONCEPTIONS OF THE STATE

14:15 – 14:25	**Վարող՝ Նարե Սահակյան** **Moderator - Nare Sahakyan**
14:25 – 14:45	Աննա Համբարձումյան, արվեստաբան, Հայաստան **Մադրասահայերի քաղաքական օրակարգը և վաղարդի եվրոպական ավանդույթը. Հայաստանի քարտեզի՝ *Աշխարհացոյց Հայաստանեայցի* ակունքներում** Anna Hambardzumyan, researcher, Armenia **The Political Agenda of the Madras Armenians and the Early Modern European Tradition: At the Source of *Ashkharhacuyc Hayastaneac* (Map of Armenia)**
14:45 – 15:05	Աշոտ Գրիգորյան, հետազոտող, Հայաստան **Պարտաբանական քաղաքական մտքի հայ ավանդույթն ու դրա սահմանները՝ Ժան-Ժակ Ռուսոյի և Դեյվիդ Հյումի տարամիտող բարոյափիլիսոփայական հայացքների ետնաբեմին** Ashot Grigoryan, researcher, Armenia **The Armenian Tradition of Deontological Political Thought and its Limitations against the background of Jean-Jacques Rousseau's and David Hume's Diverging Moral Philosophical Outlooks**

15:05 – 15:25	Մայքլ Ջիլ, փիլիսոփա, Մեծ Բրիտանիա **Բարոյական զգայարանի տեսության ծագումը լուսավորական Բրիտանիայում** Michael Gill, philosopher, UK **The Rise of Moral Sense Theory in Enlightenment Britain**
15:25 – 15:45	Մառկկու Պելտոնեն, պատմաբան, Ֆինլանդիա **Ժողովրդավարության ուսումնասիրումը վաղարդի Եվրոպայում** Markku Peltonen, historian, Finland **The Study of Democracy in Early Modern Europe**
15:45 – 16:30	Քննարկում Discussion
16:30 – 17:00	Ընդմիջում Break

17:00 – 18:10 ՆԻՍ/PANEL 3

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ. «ՈՒԽՏԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ»՝ ԿՅԱՆՔԻՑ ՎԵՐ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԵՎ ԿԵՆՍԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՄԻՋԵՎ

THE HOLY WAR AND THE STATE: THE "HOLY COVENANT" BETWEEN VALUES HIGHER THAN LIFE AND VITAL NECESSITIES

17:00 – 17:10	**Վարող՝ Իրինա Շահնազարյան** **Moderator - Irina Shahnazaryan**
17:10 – 17:30	Սիրանուշ Դվոյան, գրականագետ, Հայաստան **Րաֆֆու «ազգայնության գաղափարը» կրոնի ու գրականության միջև** Siranush Dvoyan, literary scholar, Armenia **Raffi's "Idea of Nationhood" between Religion and Literature**
17:30 – 17:50	Նարե Սահակյան, արվեստաբան, Հայաստան **Ավարայրի ճակատամարտը՝ պետության հիմքում. հայ գրագետի սուրբն ու ժողովրդի դյուցազունը** Nare Sahakyan, art historian, Armenia **The Battle of Avarayr at the Foundation of the State: The Saint of the Armenian Literary Elite and the Lionheart of the People**

17:50 – 18:10	Կոնրադ Սիկիերսկի, մշակութային մարդաբան, Գերմանիա **Հանդիպում ծառի տակ. Վարդան զորավարի կաղնին և խորհրդանիշների քաղաքականությունը ժամանակակից Հայաստանում** Konrad Siekierski, cultural anthropologist, Germany **A Meeting under the Tree: Commander Vardan's Oak and the Politics of Symbols in Contemporary Armenia**
18:10 – 19:00	Քննարկում Discussion

ՆԻՍ/PANEL 1

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ՍՏԱԼԻՆՅԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՆԴԻՆ

HISTORY AND POLITICS: BEYOND THE STALINIST HERITAGE

ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՈՒ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ

Ժիրայր Լիպարիտյան

Ելույթը կենտրոնանում է Աշոտ Հովհաննիսյանի պատմագրությանը վերաբերող մի մեկնաբանության վրա: Առասպելների՝ պատմաբանի առաջադրած դերը մեր պատմության մեջ թույլ է տալիս այն հասկանալ որպես երկու զուգահեռ ժամանակների առաջընթացը: Մեկը՝ մեր սովորական պատմությունն է. իշխանությունների ու պատերազմների, ծնունդների ու մահերի, սովորական փոփոխությունների պատմությունը: Երկրորդը՝ դանդաղ փոխվող, սակայն ավելի տիրապետող լեգենդների պատմությունն է: Այդ երկուսի խնդրահարույց հարաբերությունը, երբեմն էլ կռիվը, կարող է շատ բան բացատրել մոտավորապես վերջին հազարամյակի ընթացքում պատմության մի մակարդակի վրա հարատև փոխվող, սակայն երկրորդ մակարդակի վրա գրեթե անփոփոխ մնացող մեր պատմության մասին:

Ժիրայր Լիպարիտյանն արդի հայոց պատմություն է դասավանդել Միչիգանի համալսարանում (Անն Արբոր): Նա մի քանի լեզուներով հրապարակել է բազմաթիվ գրքեր և հոդվածներ արդի հայոց պատմության, ժամանակակից քաղաքականության և միջազգային հարաբերությունների շուրջ: 1991-ից 1997-ը եղել է Հայաստանի Հանրապետության առաջին նախագահի խորհրդական, Արտաքին գործերի առաջին փոխնախարար, Անվտանգության խորհրդի քարտուղար և Հատուկ հանձնարարություններով դեսպան: Նա երկար տարիներ դասավանդել և դասախոսել է ԱՄՆ-ի և այլ երկրների բարձրագույն կրթական հաստատություններում: Վերջին մի քանի տարիների ընթացքում լույս է տեսել Լիպարիտյանի աշխատությունների հինգհատորյակը: Ներկայումս նա աշխատում է մի քանի նոր գրքերի վրա:

THE TWO TIMELINES IN ASHOT JOHANNISSYAN'S HISTORIOGRAPHY

Gerard Jirair Libaridian

The talk revolves around an interpretation of Ashot Johannissyan's historiography. The role of the legends in our history offered by the historian allows us to use the concept of history as the progression of two parallel timelines. One of them is our ordinary history, one of power and war, birth and death, the history of ordinary change. The other one is the slower-changing and more dominant history of legends. The problematic relationship, sometimes even battle between these two can reveal much about our history which, throughout the last millennium, has changed constantly on one level and remained almost unchanged, on the other.

Gerard Jirair Libaridian is a retired professor of Modern Armenian History (University of Michigan, Ann Arbor) and author of numerous books and articles published in several languages on modern Armenian history, contemporary politics and international relations. From 1991 to 1997 he served as advisor to the First President of Armenia, First deputy Minister of Foreign Affairs, Secretary of the National Security Council and Ambassador-at-Large. He has taught and lectured extensively in institutions of higher learning in the US and internationally. Most recently, he has published a selection of his works in a five-volume series. He is currently completing a number of new book projects.

ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՂՁԱՆՔԻ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ. ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԸՄԲՌՆՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Լուսին Շաբոյան

Ելույթը կենտրոնանում է Հայաստանի առաջին և երկրորդ հանրապետություններում անկախության ու հեղափոխության գաղափարական ըմբռնումների ու դրանց մշակութային վերապատկերումների վերլուծության վրա: Այսպես 1918-ին հռչակված Հայաստանի առաջին հանրապետությունը ռազմաքաղաքական հանգամանքների բերումով էր իրողություն դարձել: Ազգային անկախությունը, քաղաքական ու հասարակական կյանքում չունենալով

գործնական հենարաններ, գրեթե անմիջապես քաղաքականապես սրբացվեց՝ կապվելով կորսված ազգային ազատության վերականգնման նվիրական գաղափարի հետ, հանուն որի պետք էր մաքառել ու նահատակվել: Ի տարբերություն Առաջին հանրապետությունում անկախության գաղափարական սրբացմանը՝ խորհրդային օրակարգի ներսում անկախությունը, ենթարկվելով համաշխարհային կոմունիզմի հաստատման ընդհանուր հեռանկարներին, ըմբռնվում էր իբրև «միջոց» խաղաղ ստեղծագործ աշխատանքի կայացման համար: Խաղաղ այդ աշխատանքն իր հերթին միտված էր սոցիալիստական այնպիսի երկրի կառուցմանը, որը ճանապարհ կհարթեր դեպի կոմունիստական հասարակություն:

Անկախ պետականությունը գաղափարական նպատակ (ազգային սրբացված ազատություն) կամ գաղափարական նպատակի (համաշխարհային կոմունիզմ) իրագործման միջոց դարձնելու մեր ավանդույթի կենսագործման մեջ, այսպիսով, իրենց կարևոր դերն են ունեցել նաև պատկերները: Ելույթը նպատակ ունի բացահայտելու այն դերակատարությունը, որոնք այդ պատկերներն ունեցել են մի կողմից քաղաքական բաղձանքների կերպավորման, մյուս կողմից գործնականում ապրվող կյանքի հետ նույն այդ բաղձանքների բարդ հարաբերության կայացման գործում:

Լուսին Շաբոյանն արվեստաբան է, Աշոտ Հովհաննիսյանի անվան հումանիտար հետազոտությունների ինստիտուտի հետազոտող: Մասնակցել է Էրիկա Դոսսի՝ Քսաներորդ դարի Ամերիկյան արվեստը գրքի թարգմանական աշխատանքներին (թրգմ.՝ Վարդան Ազատյան): Ներկայումս «Անկախության պատկերը բաղձանքի և իրականության միջև. արդի հայկական պետականության երեք հանգրվան» թեմայով հետազոտությամբ ներգրավված է Հովհաննիսյան ինստիտուտի «Մշակույթ և արդիականացում» հետազոտական ծրագրում: Հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է 19-րդ դարի արևելահայ քննադատական մտքի պատմությունը, արվեստի փիլիսոփայությունն, ինչպես նաև Հայաստանի Առաջին հանրապետության և Խորհրդային Հայաստանի մշակութային հաստատությունների կայացման գործընթացները:

THE INDEPENDENCE BETWEEN YEARNING AND REALITY: THE PERCEPTIONS OF NATIONAL INDEPENDENCE IN THE FIRST AND SECOND REPUBLICS OF ARMENIA

Lusin Shaboyan

The talk concentrates on the ideological perceptions and cultural representations of the idea of independence in the First and Second Republics of Armenia. The First Republic of Armenia, established in 1918, became a reality as a consequence of a series of military-political circumstances. The idea of national independence having no actual basis in political and social life almost immediately sanctified on a political level. It was associated with the sacramental idea of national freedom lost for the sake of which one has to suffer and eventually be martyred. As opposed to this ideological sanctification of independence in the First Republic the Soviet agenda, in line with the general vision of international communism, saw independence as a "means" for establishing an atmosphere of peaceful and creative labor. In turn this labor was directed towards building a socialist country which would pave the way towards communist society.

In this tradition of perceiving the nation state either as an ideological end in and of itself (sanctified national freedom) or as a means towards the larger ideological end (international communism) images played an important role. The talk aims to elaborate on the role these images played in imagining the political yearnings on the one hand and in establishing a link between the everyday life practices and those same yearnings on the other.

Lusin Shaboyan is an art historian and researcher at the Ashot Johannissyan Research Institute in the Humanities. She participated in the translation of Erika Doss's *Twentieth-Century American Art* (trans. Vardan Azatyan). Currently, she is part of Johannissyan Institute's project "Culture and Modernization" with a research theme "The Image of Independence between Yearning and Reality: Three Destinations of Modern Armenian Statehood". Her research interests include the history of 19th century Eastern Armenian critical thought, philosophy of art, as well as the processes of the formation of the First Armenian Republic and Soviet Armenia.

«ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ, ՈՐԸ ՀՐԱՏԱՐԱԿԵԼ ՉԻ ԿԱՐԵԼԻ». ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՏԻՊ ԳՐՔԻ ՇՈՒՐՋ

Իրինա Շահնազարյան

Ինչպիսի՞ն է հայաստանյան իրականությունը: Այս հարցին դժվար թե հնարավոր լինի պատասխանել, եթե հետամուտ չլինենք պարզելու, թե ինչ քաղաքականության արդյունք են ինքնին իրականությունը հասկանալու մեր ձևերը: Տեսաբանական այս հարցերն այսօր իրենց պատմական կոնկրետությամբ բացահայտելու եզակի հնարավորություններից է ընձեռնում Աշոտ Հովհաննիսյանի *Ուրվագծեր 19-րդ դարի երկրորդ կեսի արևելահայ հասարակական-քաղաքական մտքի պատմության* հատորն ու դրա շուրջ ծագած քաղաքական և պատմագիտական բանավեճի քննությունը: 1967-ին գրված իր գրքում Հովհաննիսյանն առաջադրում է արևելահայ ազգային-քաղաքական կուսակցությունների սկզբնավորման իր տեսությունը: Գիրքը բացահայտում է հայաստանյան արդի կյանքն ու այդ կյանքի սոցիալ-տնտեսական պայմաններից, հայաստանյան իրականությունից ծնունդ առած քաղաքական մտքի պատմությունը: Մենագրությունը, սակայն, ոչ միայն հայտաբերում է քաղաքական ու պատմագիտական մտքի մեր ժառանգությունը, այլև երևան է բերում բրեժնևյան «լճացման» տարիներին վերհառնած ստալինյան քաղաքական ու գիտական այն մտայնությունը, որը մինչ այսօր թույլ չի տվել բացահայտել այդ ժառանգությունը: Այդ մտայնության վկայությունը հենց Հովհաննիսյանի գիրքն է, որն այդպես էլ չի տպվել ու մինչ այսօր փակված է արխիվում:

Ելույթում Հովհաննիսյանի գրքին անդրադարձը հնարավորություն է բացահայտելու, թե հայաստանյան քաղաքական մտքի ինչ պատմությունից ենք մենք այսօր զրկված ու թե ինչ կարող է ասել այդ պատմության բացակայությունը մերօրյա քաղաքական մտքի ու հայաստանյան իրականության հետ հարաբերման քաղաքական մեր ձևերի մասին:

Իրինա Շահնազարյանն արվեստաբան է, Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Կերպարվեստի ֆակուլտետի արվեստաբանական բաժնի ասպիրանտ: Նա Աշոտ Հովհաննիսյանի անվան հումանիտար հետազոտությունների ինստիտուտի հետազոտող է, 2022-ից՝ Ինստիտուտի Գործադիր խորհրդի անդամ, իսկ 2024-ին ընտրվել է Հանրային հեռարձակողի խորհրդի անդամ: Ներկայումս դասավանդում է Գեղարվեստի ակադեմիայում, ինչպես նաև ներգրավված է Հովհաննիսյան ինստիտուտի «Մշակույթ և արդիականացում» հետազոտական ծրագրում,

որի շրջանակում իրականացնում է «Հայ քաղաքական մտքի ստալինյան «մաքրումներից» անդին. Աշոտ Հովհաննիսյանի պատմաքաղաքականությունը» հետազոտությունը: Գիտական հետաքրքրությունները ներառում են արվեստի և քաղաքականության առնչակցությունները, մշակութային հեղափոխության խնդիրները, ինչպես նաև քաղաքականության ու պատմագիտության փոխհարաբերությունները: Վերջիններիս շուրջ հանդես է եկել հոդվածներով և զեկուցումներով:

"TRUTH THAT CANNOT BE PUBLISHED": ON ASHOT JOHANNISSYAN'S UNPUBLISHED BOOK

Irina Shahnazaryan

What is the nature of Armenian reality? It is impossible to find an answer to this question without first trying to identify the politics from which our very means of conceiving reality originate. Ashot Johannissyan's *Outlines of the Eastern Armenian Social-Political Thought of the Second Half of the 19th Century* and the political and historiographical debate that it generated, provides a unique opportunity to elucidate these theoretical questions with historical concreteness. In the book written in 1967 Johannissyan offers his theory of the origins of Eastern Armenian national political parties. The book unravels modern Armenian life and the history of political thought that stems from that very life, from the social-economic conditions of Armenian reality. The monograph however, does not only unearth our heritage of political and historical thought but it also reveals the Stalinist political and scientific thinking that revived during Brezhnev's era of "stagnation". The book that still remains unpublished, stands as a witness to this very revival that up until today has prevented us from discovering our very heritage.

By discussing Johannissyan's book, the talk uncovers a history of political thought of which we have been deprived. It will address the question of what the absence of this history can tell us about our present-day political thinking and the means with which we relate to Armenian reality.

Irina Shahnazayan is an art historian. She is a PhD candidate at the State Academy of Fine Arts of Armenia and a researcher at the Ashot Johannissyan Research Institute in the Humanities. In 2022 she became a member of Johannissyan Institute's Executive Council.

In 2024 she was elected as a member of the Council of Public Broadcaster of Armenia. Currently she teaches at the Academy while conducting research in the framework of Johannissyan Institute's project "Culture and Modernization", on the subject of "Beyond the Stalinist 'Purges' of the Armenian Political Thought: The Ashot Johannissyan's Political Historiography." Her scholarly interests include the relationship between art and politics, the issues of cultural revolution, as well as the relationship between politics and historiography.

ՉՆՀԱԼՆԵՐ ԵՎ ՍԱՌՑԱԿԱԼՈՒՄՆԵՐ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԱԴՈՔՍԸ, 1956-1964

Ռոջեր Մարկվիք

Պատմաբանությունը և մասնավորապես Խորհրդային Միության Կոմունիստական կուսակցության պատմաբանությունը խորհրդային քաղաքական համակարգի օրինավորման գործում կենտրոնական դեր էր կատարում: *Կուսակցականության* (партийность) սկզբունքը, որ մարմնավորվել էր 1938-ին Ստալինի *Խորհրդային Միության Կոմունիստական կուսակցության (մեծամասնականների) պատմություն. կարճ կուրս* գրքում, պահանջում էր, որ խորհրդային անցյալի պաշտոնական նարատիվը հաստատի խորհրդային ներկան և դրա ապագան: Սրա արդյունքը պատմական գիտելիքի և պրոֆեսիոնալ պատմաբանների վերահսկումն էր՝ անախադեպ հրեշավոր ձևերով: Ցանկացած մասնագիտացման պատմաբանի համար բանադրանք էր դառնում սասանել այն պատմական ճշմարտությունները կամ մեթոդաբանությունը, որ ամրագրված էր պատմական մատերիալիզմի՝ *Կարճ կուրսի* տարբերակում: Հետստալինյան շրջանում պատմական «ռեվիզիոնիզմը» վտանգեց արթնացնելու կուսակցության զայրույթը, որը վախ ուներ, թե արտոնված պատմական հարացույցի ցանկացած հարցադրում կարող է խարխլել իր իշխանությունը: Կոմունիստական կուսակցության 1956-ի քսաներորդ համագումարին հետևած հարաբերական ազատականացումը՝ Ձնհալը, մի պահ բացեց ռեվիզիոնիզմի Պանդորայի արկղը: Ասես պարադոքս՝ Կուսակցությունն ինքն էր այս այլախոհ ռեվիզիոնիզմը (инакомыслящий ревизионизм) սերմանել իր ամենահավատարիմ ու առաջատար պատմաբանների շրջանում: Այնուամենայնիվ, երբ պարզ դարձավ, որ Կուսակցությունը սրանով բացել էր քննադատական պատմական գիտելիքի ու մտածողության ամբարտակները, արդեն Գլխավոր քարտուղար Բրեժնևի օրոք այն քայլ արեց վերականգնելու պատմության նեո-ստալինյան ուղղափառությունն ու ծնկի բերելու պատմաբանի մասնագիտությունը:

Ռոջեր Մարկվիքն արդի եվրոպական պատմության պատվավոր պրոֆեսոր է Նյուքասըլի համալսարանում, Ավստրալիա: Նա հեղինակել է *Վերաշարադրելով խորհրդային Ռուսաստանի պատմությունը. ռեվիզիոնիստ պատմաբանության քաղաքականությունները, 1956-1974* աշխատությունը (*Rewriting History in Soviet Russia: The Politics of Revisionist Historiography, 1956-1974* (Palgrave Macmillan, 2001)): Գիրքը 2001 թվականին արժանացել է ռուսական, խորհրդային և հետխորհրդային ուսումնասիրությունների ոլորտում Ալեքսանդր Նովի անվան մրցանակի, որը շնորհում է Սլավոնական և Արևելյան Եվրոպայի ուսումնասիրությունների բրիտանական ասոցիացիան: Ներկայում նա աշխատում է խորհրդային և հետխորհրդային «սոցիալիստական դիսիդենտության» շուրջ հատորի վրա:

THAWS AND FREEZES: THE PARADOX OF SOVIET HISTORIOGRAPHY, 1956-1964

Roger Markwick

Historical writing, particularly the historiography of the Communist Party of the Soviet Union, was central to the legitimation of the Soviet political system. The principle of *partiinost'*, embodied in Stalin's 1938 *History of the Communist Party of the Soviet Union (Bolsheviks)*: *Short Course,* demanded that the official narrative of the Soviet past confirm the Soviet present, and its future. The result was an extraordinarily draconian policing of historical knowledge and of the professional historians. It was anathema for historians of any specialty to challenge either the historical truths or the methodology enshrined in the *Short Course* version of historical materialism. In the post-Stalin period, historical "revisionism" risked the wrath of the Party, which feared that any questioning of the sanctioned historical paradigm could undermine its authority. The relative liberalization that followed 1956 Twentieth Party Congress – "the thaw" – briefly opened a Pandora's Box of revisionism. Paradoxically, the Party itself had seeded this инакомыслящий ревизионизм among some of its most loyal, leading historians. However, when it became apparent that the Party had thereby opened the floodgates of critical historical knowledge and thinking, under General Secretary Brezhnev it acted to re-establish a neo-Stalinist historical orthodoxy and to bring the historical profession to heel.

Roger Markwick is an Honorary Professor in Modern European History, The University of Newcastle (UON), Australia. He is the author of *Rewriting History in Soviet Russia: The Politics of Revisionist Historiography, 1956-1974* (Palgrave Macmillan, 2001), which

won the Alexander Nove Prize in Russian, Soviet and Post-Soviet Studies, awarded by the British Association for Slavonic and East European Studies in 2001. He is currently preparing an edited book on Soviet and post-Soviet "socialist dissidence."

ՆԻՍ/PANEL 2

ՎԱՂԱՐԴԻ ԵՎՐՈՊԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ՀԵՏՔԵՐՈՎ. ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ԸՄԲՌՆԵԼՈՒ ՄԵՐ ԱՎԱՆԴՈՒՅԹԻ ՎԵՐԱՄՏԱԾՄԱՆ ՓՈՐՁ

TRACING EARLY MODERN EUROPEAN POLITICAL THOUGHT: AN ATTEMPT TO RETHINK OUR TRADITIONAL CONCEPTIONS OF THE STATE

ՄԱԴՐԱՍԱՀԱՅԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԸ ԵՎ ՎԱՂԱՐԴԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՐՏԵԶԻ՝ *ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑԻ* ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ

Աննա Չամբարձումյան

18-րդ դարի երկրորդ կեսին Հնդկաստանի Մադրաս քաղաքում հայ գործիչները մշակում էին կորսված հայրենիքն այլադավան տիրապետողներից ազատագրելու ծրագիր: Ազատագրության և ապագա բաղձալի պետությունը օրենքի գերակայությամբ՝ սահմանադրական մոդելով կառուցելու ճանապարհը մադրասահայերը տեսնում էին քաղաքական և մշակութային գործունեության միահյուսված օրակարգում: Այս օրակարգի ներսում էր ձևավորվել Հայաստանի քարտեզ պատրաստելու ցանկությունը, որի հրատարակությունը նախաձեռնել էր հնդկահայ վաճառական Շահամիր Շահամիրյանը: Քարտեզը՝ *Աշխարհացոյց Հայաստանեայցը,* լույս էր տեսնում վաղարդի շրջանի գիտության զարգացումների վրա հենված եվրոպական քարտեզագրական դպրոցի ազդեցությամբ: Եվրոպայում տպագրական արհեստի տեխնիկական կատարելագործումը հնդկահայ գործիչներն ըմբռնում էին որպես կարևոր հենարան իրենց մշակութային գործունեության համար: Առանձնահատուկ է Շահամիրյանի քարտեզը թե՛ իր քարտեզագրական ու տեքստային բովանդակության իմաստով, թե՛ ձևավորմամբ ու պատկերագրությամբ: Բանախոսությունն, ուրեմն, քննում է սույն քարտեզն իր քաղաքական և մշակութային համատեքստում՝ և՛ որպես տեքստ, և՛ որպես պատկեր՝ շոշափելով այն ավանդույթները, որոնք ընկած են եղել քարտեզի հիմքում: Ի՞նչ Հայաստան է մեզ ներկա-

յանում սույն քարտեզով: Տեղական ու եվրոպական ի՞նչ փորձառության ու ուսումնասիրության վրա է կառուցված *Աշխարհացոյց Հայաստանեայցը*՝ պետություն ունենալու բաղձանքի և այն կյանքի կոչելու բարդ ճանապարհին: Ի՞նչ է մեզ ասում քարտեզն արդի հայ պետականության հիմքում ընկած մադրասյան քաղաքական ծրագրի մասին:

Աննա Համբարձումյանն արվեստաբան է, Աշոտ Հովհաննիսյանի անվան հումանիտար հետազոտությունների ինստիտուտի հետազոտող: 2014 թվականին Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի Կերպարվեստի պատմության և տեսության ամբիոնում պաշտպանել է մագիստրոսական ատենախոսություն՝ նվիրված 1920-ական թվականների գրական հանդեսներում պրոլետարական արվեստի խնդիրներին: Այժմ ուսանում է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ագրոնոմիական ֆակուլտետում: Ներգրավված է «Հայ հանրապետականության ավանդույթը. Մադրասի խմբակի ազատագրական գաղափարաբանությունը և տեսողական մշակույթը» թեմայով ինստիտուտի *Մշակույթ և արդիականացում* հետազոտական նախագծում: Գիտական հետաքրքրություններն ընդգրկում են 18-20-րդ դարերի հայ գրքարվեստն ու հայերի տպագրական գործունեությունը, անգլիական արվեստն ու գրականությունը, ինչպես նաև արվեստի և գյուղատնտեսության կապերը:

THE POLITICAL AGENDA OF THE MADRAS ARMENIANS AND THE EARLY MODERN EUROPEAN TRADITION: AT THE SOURCE OF *ASHKHARHACUYC HAYASTANEAC* (MAP OF ARMENIA)

Anna Hambardzumyan

In the second half of the 18th century in the Indian city of Madras Armenians developed a plan for liberating their lost homeland from non-Christian rulers. The Armenians of Madras envisioned the road to liberation and the foundation of the longed-for state grounded in the rule of law and constitution through a cultural-political agenda. The desire to publish a map of Armenia was formed within this agenda and was initiated by the Armenian merchant Shahamir Shahamiryan. The publication of the map *Ashkharhacuyc Hayastaneac* was influenced by the European school of cartography that incorporated the scientific achievements of the early modern period. The Armenian merchants of

India saw the technical improvement of the printing technology as an important anchor for their cultural activity. Shahamiryan's map is unique both in terms of its cartographic and textual content and its form and iconography. The talk examines this map within its cultural and political contexts as text and image while touching upon those traditions that informed the publication of the map. What kind of Armenia is presented in this map? What kind of European experience and knowledge is incorporated in the map, on the complex path towards obtaining the longed-for state? What does the map tell us about the Madras political project that in turn formed the foundation of the modern Armenian state?

Anna Hambardzumyan is an art historian. She is a researcher at the Ashot Johannissyan Institute. In 2014 she obtained an MA in Art History and Theory at the Academy of Fine Arts of Armenia. Her dissertation examined problematics related to the proletarian art in the literary magazines of the 1920s. Currently she studies at the Faculty of Agronomics at the Armenian National Agrarian Academy. She is part of the Institute's research team for the project Culture and Modernization where she works on "The Armenian Tradition of Republicanism. The Liberation Ideology and the Visual Culture of the Madras group." Her scholarly interests include 18-20th century Armenian book art and printing practices, English art and literature as well as connections between art and agriculture.

ՊԱՐՏԱԲԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ՀԱՅ ԱՎԱՆԴՈՒՅԹՆ ՈՒ ԴՐԱ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ՝ ԺԱՆ-ԺԱԿ ՌՈՒՍՈՅԻ ԵՎ ԴԵՅՎԻԴ ՀՅՈՒՄԻ ՏԱՐԱՄԻՏՈՂ ԲԱՐՈՅԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ԵՏՆԱԲԵՄԻՆ

Աշոտ Գրիգորյան

Բանախոսության մեջ ուշադրություն կհրավիրենք այն հանգամանքի վրա, որ հայ լուսավորական մտքի ավանդույթը պետական քաղաքականությունը սահմանում է ընդդեմ հայ ժողովրդի զգայա-նյութական իրականության մեջ արմատացած բարքերի: Քաղաքականությանը մոտենալու հայ լուսավորական ավանդույթի այս շրջանակը միջնորդավորված կերպով ազդված է ֆրանսիական լուսավորությունից՝ մասնավորապես Ժան-Ժակ Ռուսոյի բարոյափիլիսոփայությունից: Ի տարբերություն քաղաքական մտքի մեր ավանդույթի՝ մեզանում հաստատված ժողովրդական ըմբռնումների շրջանակում բարքի ու բարոյականության հա-

կադրումը միշտ չէ, որ հասկանալի կամ ընդունելի է: Սա մտքում ունենալով՝ փորձ կանենք ժողովրդական ըմբռնումների տեսանկյունից ուրվագծել բարքի ու բարոյականության հասկացությունների միջև կապերը: Ապա, ուշադրություն կհրավիրենք բարոյականության մեր ժողովրդական ըմբռնման հիմքերի վրա, որոնք սկզբից ևեթ տարամիտում են հայ լուսավորության քաղաքական մտքի ռուսոյական ուղղությունից՝ այդկերպ ուրվագծելով դրա սահմանները: Բանախոսությունը կավարտենք այն դիտարկմամբ, որ «ժողովրդական» բարոյականությունը հետևողական մտածումի առարկա դարձնելու հեռանկարներ կարելի է գտնել Ռուսոյի շոտլանդացի ժամանակակից Դեյվիդ Հյումի բարոյափիլիսոփայության մեջ. բարոյափիլիսոփայություն, որը բարոյականության հիմքում տեսնում է ոչ այլ ինչ, քան ժողովրդական առօրյա բարքը:

Աշոտ Գրիգորյանը ֆիզիկոս է, Աշոտ Հովհաննիսյանի անվան ինստիտուտի հետազոտող: Դասավանդում է Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի Արվեստաբանության ֆակուլտետում: Հովհաննիսյան ինստիտուտի «Ներքին գրոց» մատենաշարի շրջանակում կատարել է փիլիսոփա Միսաք Խոստիկյանի կյանքի և նրա ավարտաճառի վերաբերյալ պատմափիլիսոփայական հետազոտություն (*Դավիթ փիլիսոփան* (Երևան: Հովհաննիսյան ինստիտուտ, 2021)): Ներկայումս «Պետությունը անհաս բաղձանքի ու իրողության միջև. Ժան-Ժակ Ռուսոյի և Դեյվիդ Հյումի փիլիսոփայական հանդիպումը» թեմայով ներգրավված է Հովհաննիսյան ինստիտուտի «Մշակույթ և արդիականացում» հետազոտական ծրագրում: Մասնագիտական հետաքրքրությունների շրջանակում են տեսական ֆիզիկան, ֆիզիկայի պատմությունը և փիլիսոփայությունը, փիլիսոփայության պատմությունը, հայ արդիության պատմությունը:

THE ARMENIAN TRADITION OF DEONTOLOGICAL POLITICAL THOUGHT AND ITS LIMITATIONS AGAINST THE BACKGROUND OF JEAN-JACQUES ROUSSEAU'S AND DAVID HUME'S DIVERGING MORAL PHILOSOPHICAL OUTLOOKS

Ashot Grigoryan

In this presentation we will focus on the way in which the tradition of Armenian enlightenment thought has defined state politics in opposition to the customs entrenched in the sensuous-material

reality of the Armenian people. In the tradition of the Armenian enlightenment this framework of approaching politics is indirectly influenced by the French Enlightenment, and especially by Jean-Jacques Rousseau's moral philosophy. As opposed to our tradition of political thought, and from within the framework of popular conceptions, the opposition between mores and morality is not always conceivable or acceptable. With this in mind, we will attempt to outline the connections between customs and morality from the standpoint of their popular conceptions. Furthermore, we will direct our attention to the foundations of our popular conceptions of morality which from the start divert from the Rousseauian tradition of Armenian enlightenment political thinking, thus demarcating the latter's limitations. We will end the talk with the observation that it is in Rousseau's Scottish contemporary David Hume's moral philosophy that we may find attempts at thinking about "popular" morality. It is because Hume's philosophy places the everyday customs of the people at the foundation of morality.

Ashot Grigoryan is a physicist and researcher at the Ashot Johannissyan Institute. He also teaches at the Yerevan State Academy of Fine Arts. In addition to his specialization in physics he is interested in the philosophy of science. Recently he completed an extensive research project on early 20th century Armenian philosopher Missak Khostikian (Missak Khostikyan. David the Philosopher (Yerevan: Johannissyan Institute, 2021)). Currently he is involved in the Johannissyan Institute's project Culture and Modernization with a research theme "The State between Unreachable Yearning and Reality: The Philosophical Encounter of Jean-Jacques Rousseau and David Hume." His research interests include theoretical physics, the history of physics, philosophy, history of philosophy and the history of Armenian modernity.

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԶԳԱՅԱՐԱՆԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ԲՐԻՏԱՆԻԱՅՈՒՄ

Մայքլ Ջիլ

Բարոյական զգայարանի տեսությունը մեկն է բարոյականության այն երեք տեսություններից, որոնք մրցում էին լուսավորական Բրիտանիայում՝ զբաղեցնելու նախկինում գերիշխող կրոնական բարոյական մտածողության տեղը: Մյուս երկու տեսություններն էին ռացիոնալիզմն ու էգոիզմը: Շատ կոպիտ ասած՝ ռացիոնալիզմը ենթադրում էր, որ բարոյական դատողությունը սկիզբ է առնում միայն բանականությունից: Էգոիզմի տեսանկյունից՝ բարոյա-

կան դատողությունը ծնվում է սեփական շահից: Բարոյական զգայարանի տեսության մեջ բարոյական դատողությունը ծնունդ է առնում զգայությունից: Բարոյական զգայարանի բրիտանական տեսության՝ բացատրական տեսանկյունից ամենազորավոր տարբերակը Դեյվիդ Հյումի բարոյական սենտիմենտալիզմն է: Ելույթը կպարզաբանի, որ Հյումի սենտիմենտալիզմի զորավոր լինելու հիմնական պատճառներից մեկը մարդկային բնության նրա ըմբռնուման առանձնահատուկ ճկունությունն է: Մարդկային բնության ճկունության նման մի ըմբռնում կենտրոնական կդառնա նաև Ռուսսոյի փիլիսոփայության համար:

Մայքլ Ջիլը 2020 թվականից ղեկավարում է Էդինբուրգի համալսարանի փիլիսոփայության ամբիոնը: Մինչ այս նա փիլիսոփայություն է դասավանդել Արիզոնայի համալսարանում, Չարլսթոնի քոլեջում և Փերդյուի համալսարանում: 1995-ին Հյուսիսային Կարոլինայի համալսարանում նա դոկտորական աստիճան է ստացել «Մարդկային բնությունը և բարոյականության հասանելիությունը Քադվորթի, Հաչեսոնի և Հյումի մոտ» թեմայով իր աշխատության համար: Ջիլը Բրիտանական բարոյական փիլիսոփայության շուրջ բազմաթիվ ակադեմիական հոդվածների և նույն թեմայով մի քանի մենագրությունների հեղինակ է՝ ներառյալ *Բրիտանացի բարոյագետները մարդկային բնության մասին և աշխարհիկ էթիկայի ծնունդը* աշխատությունը (*The British Moralists on Human Nature and the Birth of Secular Ethics* (Cambridge, New York: Cambridge University, 2006)):

THE RISE OF MORAL SENSE THEORY IN ENLIGHTENMENT BRITAIN

Michael Gill

The moral sense theory was one of three theories of morality that vied in Enlightenment Britain to take the place of previously dominant religious moral thinking. The two other competing theories were rationalism and egoism. Speaking very roughly, rationalism held that moral judgment originates in reason alone; egoism held that moral judgment originates in self-interesting; and the moral sense theory held that moral judgment originated in sentiment. The most explanatorily powerful version of British moral sense theory was the moral sentimentalism of David Hume. The talk will explain that one of the main reasons Hume's sentimentalism was so powerful was his distinctively malleable conception of human nature. A similar understanding of human nature's malleability would also become central to Rousseau's philosophy.

Michael Gill is the Chair in Philosophy at University of Edinburgh since 2020. Prior to this he taught philosophy at University of Arizona, College of Charleston and Purdue University. In 1995 he received his PhD from the University of North Carolina on the topic of "Human Nature and the Accessibility of Morality in Cudworth, Hutcheson, and Hume." He has written numerous academic articles on British moral philosophy and is the author of several book-length monographs on the same topic, including *The British Moralists on Human Nature and the Birth of Secular Ethics* (Cambridge, New York: Cambridge University, 2006).

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ ՎԱՂԱՐԴԻ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

Մառկու Պելտոնեն

Ելույթը հասցեագրում է հարցը, թե ինչպես պետք է ուսումնասիրվի ժողովրդավարությունը վաղարդի Եվրոպայում: Քննարկվում են երեք տարբեր մոտեցումներ. ժողովրդավարության կիրառումներ, ժողովրդավարացում, և ժողովրդավարության իմաստը: Ելույթը կարճ պարզաբանում է առաջին երկուսը (ժողովրդավարության կիրառումներ և ժողովրդավարացում), բայց հիմնականում քննում երրորդը՝ ժողովրդավարության իմաստը՝ կենտրոնանալով 17-րդ դարակեսի Անգլիական հեղափոխության վրա: Հենց այս հեղափոխական տասնամյակների ընթացքում էր, որ ժողովրդավարության արժեքականությունն ու իմաստը փոխակերպվեց: Այն աստիճանաբար սկսեց ըմբռնվել ներկայացուցչական եզրույթներով, ինչը հնարավոր դարձրեց պաշտպանել ժողովրդավարությունն իբրև սահմանադրականության լավագույն ձևը: Սա իր հերթին կանխատեսեց քաղաքական մտքի՝ Ֆրանսիական հեղափոխությամբ նշանավորված զարգացումները:

Մառկու Պելտոնեն Հելսինկիի համալսարանի Փիլիսոփայության, պատմության և արվեստի ֆակուլտետի դասախոս է: Նա 1992 թվականին Հելսինկիի համալսարանում ստացել է դոկտորական աստիճան ընդհանուր պատմության ոլորտում: Պելտոնենը բազմաթիվ հոդվածներ և ուսումնասիրություններ է հեղինակել վաղարդի մտավորական և մշակութային պատմության՝ մասնավորապես քաղաքական պատմության շուրջ՝ ներառյալ իր *The Political Thought of the English Free State,*

1649–1653 (Cambridge: Cambridge University, 2023) մենագրությունը: Նա նաև *The Cambridge Companion to Bacon* (Cambridge: Cambridge University, 2006) հատորի խմբագիրն է:

THE STUDY OF DEMOCRACY IN EARLY MODERN EUROPE

Markku Peltonen

The talk addresses the question of how to study democracy in early modern Europe. Three different approaches are discussed: practices of democracy; democratization; and the meaning of democracy. The paper briefly explains the first two (practices of democracy and democratization) but mainly examines the third – the meaning of democracy, focusing on the English Revolution of the mid-seventeenth century. It was during those revolutionary decades, the paper demonstrates, that the valence and meaning of democracy were transformed. Democracy was increasingly understood in representative terms, making it possible to defend democracy as the best constitutional form and thus anticipating developments in political thought which became prominent in the French Revolution.

Markku Peltonen is a professor at the Department of Philosophy, History and Art Studies at the University of Helsinki. In 1992 he received his PhD from the University of Helsinki in the field of general history. Dr Peltonen has authored numerous articles and book-length studies on the topics of early modern intellectual and cultural history, particularly political thought, including his monograph *The Political Thought of the English Free State, 1649–1653* (Cambridge: Cambridge University, 2023). He is also the editor of *The Cambridge Companion to Bacon* (Cambridge: Cambridge University, 2006).

ՆԻՍ/PANEL 3

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ. «ՈՒԽՏԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ»՝ ԿՅԱՆՔԻՑ ՎԵՐ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԵՎ ԿԵՆՍԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՄԻՋԵՎ

THE HOLY WAR AND THE STATE: THE “HOLY COVENANT” BETWEEN VALUES HIGHER THAN LIFE AND VITAL NECESSITIES

ՐԱՖՖՈՒ «ԱԶԳԱՅՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ» ԿՐՈՆԻ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Սիրանուշ Դվոյան

«Ժամանա՛կ է թօթափել հին նախապաշարումների փոշին, ժամանա՛կ է ձեռք առնել *դպրոցը*, որպէս մի նոր կապ մեր և մեզանից օտարացած ազգայինների մէջ,– որպէս մի նոր աւազան, որտեղ հայ-կաթօլիկը, հայ-մահմետականը և հայ-բողոքականը կը մկրտվեն նոր հոգով և նոր կեանքով, և կը դրոշմվեն *ազգայնութեան* անունով.– դրանով միայն կարող ենք միացնել մեզ հետ մեր եղբայրներին, որ բաժանեց եկեղեցու աւազանը»,– այսպես է ավարտում Րաֆֆին 1878 թ. գրած իր «Ի՞նչ վերանորոգութիւններ պէտք են Տաճկական Հայաստանին» հոդվածը՝ գործնական հանգրվանի հասցնելով ազգային նոր հավաքականության կերտման իր վաղ պատկերացումները: 1860-ական թվականներից ի վեր գրողը հետևողականորեն վիճարկում էր հայերի՝ կրոնական ազգ լինելու ժամանակի տարածված համոզմունքն ի հաշիվ այն ըմբռնման, որ հայության քաղաքական, աշխարհագրական և դավանական պատճառներով առաջ եկած հատվածականությունը հնարավոր է հաղթահարել արդի լուսավորության դարբնոց հանդես եկող կրթական լուսավորության ճանապարհով:

Ձեկուցումը քննարկում է 1870-ական թվականների վերջերին ռուս-թուրքական պատերազմի համատեքստում գրողի հղացած գրական-քաղաքական ծրագրի այն կետերը, որոնք մասնավորապես ի ցույց են դնում արդի ազգի նրա պատկերացումների ներքին հակասականությունը, կրոնական հավաքականության «հին» գաղափարի վիճարկման այն բարդությունները, որոնք առաջանում են քաղաքական անազատության պայմաններում առաջ քաշվող գրական ճանապարհով արդիացող նոր հավաքականության կերտման ճանապարհին:

Սիրանուշ Դվոյանը ՀՀ ԿԳՄՍՆ Լեզվի կոմիտեի նախագահն է, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ: Դասավանդում է Հայաստանի ամերիկյան համալսարանում: Ժամանակակից սփյուռքահայ և արևմտահայ մի շարք հեղինակների (Գրիգոր Պըլտեան, Մարկ Նշանեան, Զարեհ Որբունի, Եղիա Տէմիրճիպաշեան) հատորների խմբագիրն ու կազմողն է: Վերջին տարիներին զբաղվել է խորհրդային ստալինյան աքսորական գրականության ուսումնասիրությամբ: Կազմել և հրատարակել է խորհրդահայ աքսորական Վաչե Սարգսյանի *Ակեղդամա* եռահատոր վեպի երկու հատորները՝ հեղինակի աքսորական փորձառությունը ներկայացնող հետազոտությամբ: Հեղինակ է բազմաթիվ ուսումնասիրությունների և հոդվածների՝ հրատարակված տեղական և միջազգային գիտական պարբերականներում: Գիտական հետաքրքրությունների շրջանակում են հանրային կյանքի և անձնական փորձառության փոխակերպումներում խոսքային պրակտիկաների, պետական բռնության ու վերջինիս գեղարվեստական վերապատկերման, գրականության ու քաղաքականության փոխհարաբերությունների ուսումնասիրությունը:

RAFFI'S "IDEA OF NATIONHOOD" BETWEEN RELIGION AND LITERATURE

Siranush Dvoyan

"It is time to shake off the dust of prejudices, it is time to take up the *school* as a new link between us and those fellow countrymen who are alienated from us, as a new font in which the Catholic Armenian, the Muslim Armenian, the Protestant Armenian will be baptized with new spirit and new life and will be inscribed in the name of the nationhood. This is the only way to unite with us our brothers who are separated by the font of the church." This is how Raffi ends his 1878 article "What Are the Reforms Needed in Tajik Armenia." In this text he brought to a practical destination his ideas of the construction of new national collectivity. Since the 1960s the writer consistently challenged at the time widely spread perception of the Armenians as a religious nation. Instead, he proposed that the fragmentation of the Armenians caused by political, geographical and religious reasons is possible to overcome through the path of education as the axis of modern enlightenment.

The talk discusses the particular points of the writer's literary-political program conceptualized in the context of the Russian-Turkish war at the end of the 1870s that showcase the inner contradictions of

his perceptions of modern nation. It brings us to the complications of challenging the "old" idea of religious collectivity that arise when the path towards the new collectivity is being outlined in political captivity by a literary figure.

Siranush Dvoyan is the chairperson of the RA MESCS Language Committee, has a PhD in literary studies and teaches in the American University of Armenia. She is the editor of the volumes of a number of contemporary Diaspora Armenian and Western Armenian authors such as Krikor Beledian, Marc Nichanian, Zareh Vorpuni and Eghia Temirchipashyan. During the recent years she studied the experience of the Soviet state violence (GULAG) and its reflection in the literary texts, compiled and published the first two volumes of the three-volume novel *Akekhdama* by the Soviet-Armenian exile-writer Vache Sargsyan. She is the author of many studies and articles published both in local and in international journals. Her research interests include the speech practices within the transformations of public life and personal experiences, state violence and its articulations in literature, the relationship between literature and politics.

ԱՎԱՐԱՅՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՒՄ. ՀԱՅ ԳՐԱԳԵՏԻ ՍՈՒՐԲՆ ՈՒ ԺՈՂՈՎՐԴԻ ԴՅՈՒՑԱԶՈՒՆԸ

Նարե Սահակյան

19-րդ դարի վերջին հայերի՝ իբրև արդի ազգ կայանալու գործընթացում Էական նշանակություն է ունեցել Եղիշեի *Վասն Վարդանանց և Հայոց պատերազմին* երկը: Ավարայրի այս պատումից է ծնունդ առնում ամբողջ ժողովրդով միաբան նահատակության գնալու կրոնաեկեղեցական իդեալը՝ «ուխտի միաբանությունը», որը 19-րդ դարից սկսած տարբեր մտավորական գործիչների կողմից այս կամ այն կերպ աշխարհիկացվել ու հայերի՝ որպես արդի ազգի ինքնաընկալման հիմքում է դրվել: Այս բարձր իդեալի տակ միաժամանակ տրոփում են ժողովրդի կյանքում իրենց իրական ներկայությունն ունեցող համայնքային արժեքները՝ սեփական ընտանիքն ու օջախն ամեն կերպ պաշտպանելու, իրար համար ապրելու, մեռնելիս ընկերովի՛, քեֆ-ուրախությամբ մեռնելու բարոյականությունը:

Իբրև մեկնակետ՝ ելույթը ներկայացնում է սրբազան պատերազմի և պետության՝ մեզանում

իր հաստատված տեղն ունեցող զուգահեռը, այնուհետ երևան հանում հայերի սահմանադիր սրբազան պատերազմի հերոս, դյուցազուն նահատակ Վարդան Մամիկոնյանի ժողովրդական ու մտավորական ընկալումների մի բարդ սերտաճում: Սա թույլ է տալիս նկատել, որ հայերի շրջանում պայմանականորեն առանձնացված մտավորական վերնախավերի և ժողովրդական ներքնախավերի պետության ընկալումները խորքում տարբեր են ու նույնիսկ հակառակ: Սրանցից մեկն ի հայտ է բերում ժողովրդի ողջ-առողջ լինելու ցանկությունը, կենսական ու ընտանեկան կապերը, համայնական կյանքը, դրա մեջ ցոլարձակող հաճույքները և դրանք պաշտպանելու քաջությունն ու ուժը: Մյուսի խորքում ամրացած է այդ նույն կյանքից վեր, սրբազան գաղափարի համար սիրահոժար նահատակվելու գնալը, գիտակցված ու միաբան նահատակությունն ինքնին իբրև մահը հաղթահարելու ճանապարհ տեսնելը:

Նարե Սահակյանն արվեստաբան է, կուրատոր, Հովհաննիսյան ինստիտուտի հետազոտող: Ավարտել է Բեյրութի ամերիկյան համալսարանի Արվեստի պատմություն և կուրատորություն մագիստրոսական ծրագիրը՝ պաշտպանելով «Կանտի հետսովետական հմայքը. Վիլհելմ Մաթևոսյանի արվեստաբանությունը» ավարտական թեզը: 2021 թվականից Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում վարում է մի շարք դասընթացներ: «Սրբազան պատերազմ և պետություն. Ավարայրի ոգեկոչումներն ազգային պետության հիմքերում» թեմայով ներգրավված է Հովհաննիսյան ինստիտուտի *Մշակույթ և արդիականացում* նախագծում: Մասնագիտական հետաքրքրություններն ընդգրկում են արվեստաբանության՝ իբրև գիտակարգի պատմությունը և հայագիտության սկզբնավորման խնդիրներն արևելահայաստանում:

THE BATTLE OF AVARAYR AT THE FOUNDATION OF THE STATE: THE SAINT OF THE ARMENIAN LITERARY ELITE AND THE LIONHEART OF THE PEOPLE

Nare Sahakyan

In the processes of the formation of Armenians as a modern nation at the end of the 19th century Eghishe's *History of Vardan and the Armenian War* played a major role. It is from this narrative of the battle of Avarayr that the religious-ecclesiastical ideal of "holy covenant" was born. Starting from the 19th century this concept implying collective martyrdom of the entire people was secularized

by a range of intellectuals eventually forming the self image of Armenians as a modern nation. Simultaneously, under this high ideal another set of values is palpable which has a real presence in the collective life of the Armenian people, that is the moral of defending one's own family at any cost, living for one another, and at the time of death dying joyously together.

The talk takes as its vantage point the parallel of a holy war and the establishment of the state deep seated among us. It further shows the complex coalescence between the popular and intellectual images of the hero of the fundamental holy war of Armenians, Vardan Mamikonyan. This helps us to notice that the perception of the idea of the state among provisionally separated intellectual elites and lower classes of people are different and even contradictory at their core. One of them brings up the desire of people for longevity and good health, deep attachments to the family ties, devotion to the bloodline, the collective life, the enjoyments within that life and the bravery to defend it. At the core of the other is the willful thrust towards martyrdom in the name of a sacred idea higher than the life itself that views the reasoned and unanimous martyrdom as a path to overcome death on the earth.

Nare Sahakyan is an art historian, curator and researcher at the Ashot Johannissyan Research Institute in the Humanities. She received her MA degree in American University of Beirut defending the thesis "The Late Soviet Charm of Kantianism: Wilhelm Matevosyan's Art History." Since 2021 she teaches several courses at the Yerevan State Academy of Fine Arts. Currently she is a researcher at the Johannissyan Institute and is involved in the project *Culture and Modernization* with the theme "The Holy War and the State: The Invocations of the Battle of Avarayr at the Foundations of the Nation State". Her research interests include the history of the discipline of Art History and the formation of Armenian Studies in Eastern Armenia.

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԾԱՌԻ ՏԱԿ. ՎԱՐԴԱՆ ԶՈՐԱՎԱՐԻ ԿԱՂՆԻՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Կոնրադ Սիկիերսկի

Ելույթում քննության կառնեմ Տավուշի մարզի Ակնաղբյուր գյուղում գտնվող մի կաղնի ծառի սոցիալական կյանքն ու խորհրդանշական ուժը: Այն ըստ ավանդության հինգերորդ դարում տկել է հայ զորավար և Հայ առաքելական եկեղեցու սուրբ Վարդան Մամիկոնյանը:

Սկզբում կքննեմ այս ծառի շուրջ իրադարձությունների այն շարքը, որ հետազոտել եմ 2007 թվականին: Այնուհետ առավել ընդլայն կանդրադառնամ Հայաստանում խորհրդանիշների ժամանակակից քաղաքականությանը:

Վարդան Մամիկոնյանի կաղնին սուրբ տարածք է և ուխտատեղի, ուր շրջակա գյուղերից մարդիկ ավանդաբար այցելում են զոհ մատուցելու և սրբի աջակցությունը հայցելու: Սակայն 2005 թվականին Երևանից մի լրագրող որոշեց այն վերածել բանակի նորակոչիկների փառատոնի տարածքի, ինչն իրագործվեց հայկական ավանդույթների և հայրենասիրության վերարթնացման նպատակով: Շուտով այս գաղափարը զարգացավ և ծառի կողքին եկեղեցի կառուցելու որոշում կայացվեց: 2007-ի դեկտեմբերին եկեղեցու բացման արարողությունը գրավեց իր շուրջը հայ եկեղեցու բարձրաստիճան սպասավորների, բանակի ներկայացուցիչների և տեղի պաշտոնյաների: Այստեղ նորակոչիկների երդումին միացել էին կրոնական արարողություններն ու նախագահական ընտրարշավը:

Վարդանի ծառի տակ այս հանդիպումը բացահայտում է, թե ինչքան տարբեր իմաստներ կարող են կապվել մի տեղի հետ՝ դրա շուրջը գրավելով տարբեր հեղինակություններ, հետաքրքրություններ, հավատալիքներ և հույսեր: Միաժամանակ սա նաև թույլ է տալիս մտածել այն ազդեցության մասին, որ ազգագրական գործն անսպասելիորեն ու ակամա կարող է ունենալ սոցիալ-մշակութային և քաղաքական երևույթների վրա:

Կոնրադ Սիկիերսկին մշակութային մարդաբան է: Նա իր դոկտորական աստիճանը ստացել է Լոնդոնի Քինգս Քոլեջի Աստվածաբանության և կրոնական ուսումնասիրությունների ֆակուլտետից: Վերջին տասնամյակում նա դասավանդել է մի շարք համալսարաններում, ինչպես Տեխասի համալսարանը (2015), Ֆրեզնոյի պետական համալսարանը (2013) և Երևանի պետական լեզվաբանական համալսարանը (2010): Նրա մասնագիտական հետաքրքրություններն ընդգրկում են կրոնը հետխորհրդային Հայաստանի հանրապետությունում (Հայ առաքելական և Հայ կաթոլիկ եկեղեցիները, ինչպես նաև նոր-հեթանոսությունը), ինքնության ձևավորումը հայկական սփյուռքում և ժամանակակից կաթոլիցիզմը Լեհաստանում:

A MEETING UNDER THE TREE: COMMANDER VARDAN'S OAK AND THE POLITICS OF SYMBOLS IN CONTEMPORARY ARMENIA

Konrad Siekierski

In this paper, I analyze the social life and symbolic power of an oak tree in Aknaghpyur village (Tavush region of Armenia) allegedly planted in the fifth century by Vardan Mamikonian – an Armenian military commander and saint of the Armenian Apostolic Church. To start, I examine a series of events around this tree, which I researched in 2007. Then, I discuss the contemporary politics of symbols in Armenia more broadly.

Vardan Mamikonian's Oak is a sacred place and pilgrimage site, traditionally visited by people from surrounding villages to offer sacrifices and seek the saint's support. However, in 2005, a journalist from Yerevan decided to make it the site of a festival for army recruits, organized with the aim of reawakening Armenian traditions and patriotism. Soon, the idea developed, and the decision was made to build a church next to the tree. The opening ceremony in December 2007 attracted the hierarchs of the Armenian Church, politicians, army representatives, and local officials, and the recruits' oath was combined with religious rituals and the presidential election campaign.

This meeting under Vardan's tree reveals how different meanings can be attached to one place, thus attracting various powers, interests, beliefs, and hopes. At the same time, it also provides an insight into the impact that ethnographic work can have – unexpectedly and inadvertently – on socio-cultural and political phenomena.

Konrad Siekierski is a cultural anthropologist. He received his PhD from the Department of Theology and Religious Studies at King's College London. Throughout the last decade he gave lectures in several universities such as University of Texas (2015), Fresno State University (2013), Yerevan State Linguistic University (2010). His professional interests include religion in the post-Soviet Republic of Armenia (Armenian Apostolic Church, Armenian Catholic Church, and neopaganism), identity formation in the Armenian diaspora, and contemporary Catholicism in Poland.







Խանջյան 19, 5-րդ հարկ, Երևան

Khanjyan 19, 5th floor, Yerevan